



OSCE
Organization for Security and
Co-operation in Europe
Office in Yerevan



**ԻՆՏԵՐՆԱՏԻՈՆԱԿԱՆ
ԱՎՈՐՄԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ**



**ԿՈՐՈՒՊՇԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ
& ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՍՐԱՊԵՏԻՎՈՒՄԸ
ԻՐ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**CORRUPTION PREVENTION and STRENGTHENING of
INTEGRITY in EDUCATIONAL SYSTEM of ARMENIA**



ԵԱՀԿ

Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



Ծրագիրը
ֆինանսավորվել է
Եվրոպական
միության կողմից

Ծրագիրը
համաֆինանսավորվել
է
ԵԱՀԿ Երևանյան
գրասենյակի կողմից

Իրականացնող՝
Իրավաբանների հայկական
ասոցիացիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության կենտրոն

Իրականացնող՝
«Էլեգիա» մշակութային ՀԿ

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ
ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

(Մշտադիտարկման արդյունքների հետազոտություն)

«Էլեգիա» մշակութային հասարակական կազմակերպություն

Խմբագիր՝ պ.գ.թ, դոցենտ Հարություն Ալեքսանյան

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՊԵՆԴՈՒՄԸ
ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

(Մշտադիտարկման արդյունքների հետազոտություն)

«Հակակոռուպցիոն կրթության և բարեվարքության ամրապնդման մշտադիտարկում ՀՀ Բուհերում» ծրագիրը իրականացրել է «Էլեգիա» մշակութային հասարակական կազմակերպությունը՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,265,200 ՀՀ դրամ, որից 865,200 ՀՀ դրամը տրամադրվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 1-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1.0 Ներածություն.....
- 2.0 Կոռուպցիայի կանխարգելումը ՀՀ-ի ԲՈԻՀ-ական համակարգում.....
- 3.0 Բարեվարքության դասավանդամն արդյունավետությունը ԲՈԻՀ-երում....
- 4.0 Առաջարկություններ.....
- 5.0 Եզրակացություն.....
- 6.0 Գրականատության ցանկ.....
- 7.0 Հավելվածներ.....

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ
ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

(Մշտադիտարկման արդյունքների հետազոտություն)

1.0 Ներածություն

Հայաստանի հանրապետության կրթական համակարգը բացառիկ դեր է խաղում Հայաստանի *Օրինավորության Ազգային Համակարգում*: Այն հանդիսանում է նրա կարևոր հիմնասյուներից մեկը: Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի բուհերում ներդրվում են բարեվարքության ծրագրեր, աշխատանքներ են տարվում ԲՈՒՀ –երում էթիկայի կանոնագիրք ստեղծման և կիրարկման ուղղությամբ:¹ 2009 թ. սկսած Հայաստանի շուրջ 50 ԲՈՒՀ-եր դարձել են “ Ինթեգրիթի Էքշն” բրիտանական կազմակերպության Բարեվարքության Կրթական Ցանցի անդամներ և մասնակցել են սեմինարների, դասընթացների, կոնֆերանսների, կլոր սեղանների և այլ կարգի միջոցառումների: Համաձայն “ Ինթեգրիթի Էքշն”-ի և վերոհիշյալ ԲՈՒՀ-երի միջև կնքված հուշագրերի, նրանք իրենց ուսումնական ծրագրերում ընդգրկել են դասընթացներ բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաների ուղղվածությամբ: Կոռուպցիայի դեմ պայքարը, որպես իր ռազմավարության առաջնահերթություն է սահմանել նաև ՀՀ Գիտության և Կրթության նախարարությունը: Այդ ամենի հետ մեկտեղ, պետք է նշել, որ Հայաստանում կրթության ոլորտը դեռևս մնացել է ամենաշատ կոռուպցիայից ոլորտներից մեկը և բոլորվին էլ պատահական չէ, որ հանդիսանում է 2015-2018 թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության այն չորս ոլորտներից մեկն է , որտեղ կառավարությունը կոնկրետ ռազմավարական խնդիր է հետապնդում՝ նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և արմատախիլ անել կոռուպցիան: Մակայն, համաձայն “ Թրանսփարենսի Ինթերնեյշնալի “ Հայաստանի Օրինավորության Ազգային Համակարգի 2014 թ գնահատման կրթության ոլորտը կոռուպցիայի դեմ պայքարում իր դերակատարումով ստացել է ամենացածր գնահատականը -0:²

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը, ուստի՝ այս ոլորտի զարգացումը երկրի զարգացման գերակայություններից մեկն է: ՀՀ կառավարությունը որպես կրթության ոլորտի առաջնային խնդիրներ դիտարկում է կրթության համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, դրանց համապատասխանեցումը միջազգային չափանիշներին, մատչելի և հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար:³ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված՝

¹ Տես Եվրոպայի Խորհրդի”Հայաստանի Բարձրագույն Կրթության համակարգում Բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքար” ծրագիրը

² Հայաստանի Օրինավորության Ազգային Համակարգի Գնահատում 2014, էջ. 102

³ Տե՛ս ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, հավելված, էջ 30

«Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-12թթ. համալիր գործողությունների ծրագրի» համաձայն բուհերը մշակել են այդ հաստատությունների տարեկան հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերը: Խստացվել են բուհերի լիցենզավորման չափանիշները, ինչի արդյունքում նախկին ավելի քան 90 մասնավոր բուհերից այսօր գործում է 34-ը: Մակայն ներկայումս հատկապես կարևորվում է բուհերում դասանդվող բարեվարքության և հակակոռուպցիոն դասընթացների/ մոդուլների արդյունավետության մշտադիտարկումը/ գնահատումը:

1.1. Հետազոտության նպատակները

“Հակակոռուպցիոն կրթության և բարեվարքության ամրապնդման մշտադիտարկում ՀՀ Բուհերում” ծրագիրը նպատակ է հետապնդում մշտադիտարկման միջոցով`

- 1/ Ուսումնասիրել ԲՈՒՀ-երում իրականացվող բարեվարքության գծով դասավանդվող առարկաների արդյունավետությունը,
- 2/ Պարզել թե ինչպես են ուսանողները կարողանում գործնականում կիրառել պրակտիկայում բարեվարքության գծով իրենց ստացած գիտելիքները և հմտությունները,
- 3/ Ուսումնասիրել ԲՈՒՀ-երի ադմինիստրացիայի և համապատասխան պետական կառույցների միջոցառումների արդյունավետությունը կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման ուղղությամբ:

1.2. Շահառուները

Հետազոտության արդյունքների ուղղակի շահառուներն են Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը /ԲՈՒՀ-երը,/ ուսանողները նրանց ծնողները, ՀՀ Գիտության և կրթության նախարարությունը և այլ համապատասխան տեղական և միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան:

Հետազոտության արդյունքների անուղղակի շահառուներն են ամբողջ հասարակությունը, ՀՀ Կառավարությունը

1.3. Հետազոտության ակնկալվող արդյունքերը և ազդեցությունը

Մշտադիտարկման և ուսումնասիրությունների արդյունքում հրապարակված տվյալ հետազոտությունը կառաքվի,

ա/ ՀՀ ԲՈՒՀ-երին և ՀՀ Գիտության և կրթության նախարարության համապատասխան բաժիններին և ղեկավարությանը,

ա/ Հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ բոլոր Հկ-ներին:

1.4. Ծրագրի իրականացման մեթոդաբանությունը և գնահատման գործիքները

Ծրագիրը իրականացնելու համար կիրառվել հետևյալ մեթոդաբանությունը:

ա/ սոցիոլոգիական հարցումներ պատահական ընտրությամբ ընտրված 9 համալսարանների 350 ուսանողների շրջանում

բ/ հարցազրույցներ ԲՈՒՀ-երի դասախոսների և ադմինիստրացիայի հետ,

գ/ հարցազրույցներ ՀՀ Գիտության և կրթության նախարարության համապատասխան ոլորտի պաշտոնյաների հետ,

դ/ հարցազրույցներ ՀՀ Ազգային Ժողովի Գիտության, Կրթության Երիտասարդության և Սպորտի հանձանժողովի փորձագետների հետ:

Կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության նպատակով իրականացվել է սոցիոլոգիական հարցումներ հանրապետության 7 պետական և 2 մասնավոր համալսարաններում: Սոց.հարցումները կատարվել են ստորև նշված 9 ԲՈՒՀ-երի պատահական ընտրությամբ **350** ուսանողների շրջանում:

1. Երևանի Պետական Համալսարան- 35 ուսանող
2. Հայկական Պետական Մանկավարժական Համալսարան- 41 ուսանող
3. Երևանի Ճարտարագիտական Համալսարան - 30 ուսանող
4. Երևանի Պետական Բժշկական Համալսարան- 40 ուսանող
5. Գյումրու Պետական Մանկավարժական Համալսարան- 66 ուսանող
6. Կառավարման Ակադեմիա Համալսարան- 31 ուսանող
7. Ճարտարագիտական Համալսարան- 30 ուսանող
8. Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա - 36 ուսանող
9. Մովսես Խորենացու համալսարան- 41 ուսանող

1.5. Հետազոտության այլ աղբյուրներ

- Թերթերում և ամսագրերում եղած հրապարակումներ ՀՀ կրթական համակարգի վերլուծության և հակակոռուպցիոն կրթության արդյունավետության վերաբերյալ
- ՀՀ Կրթության մասին օրենքը, օրենսդրական այլ ակտեր,
- Տվյալ թեմային առնչվող գրքեր, հոդվածներ և այլ հետազոտություններ:

1.6. Սահմանափակումներ

Որոշակի սահմանափակումներ եղել են հարցազրույցների ժամանակ, երբ ռեսպոնդենտները խուսափում էին բաց կերպով խոսել կամ գրել **հենց իրենց** համալսարանում պատահած կոռուպցիոն դեպքերի կամ գոյություն ունեցող կոռուպցիոն ռիսկերի մասին: Այսպես, մի շարք ուսանողներ և աշխատողներ՝ չցանկանալով ներկայանալ, պատմեցին ԲՈՒՀ-ական դրամահավաքության բազմաթիվ օրինակների մասին այլ ԲՈՒՀ-ում, որոնք իրենք լսել էին իրենց ընկերներից և բարեկամներից, սակայն խուսափեցին խոսել իրենց ԲՈՒՀ-ում եղած կոռուպցիոն դեպքերի մասին:

**2.0 ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄԸ ԲՈՒՀ-ԵՐՈՒՄ:
ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երում Կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կանխարգելման նպատակով մշտադիտարկում է կատարվել Հայաստանի 9 ԲՈՒՀ-երի ուսանողների և դասախոսների շրջանում: Սոցիոլոգիական հարցումներ են անցկացվել վերը նշված ԲՈՒՀ-երի 350 ուսանողների շրջանում:

350 ուսանողներն ընտրվել են պատահական ընտրությամբ: Նրանցից 232-ը կամ 66,3% -ը իզական սեռի են, իսկ 118-ը՝ կամ 33,7 %-ը, արական, տես գրաֆիկ 1 : Հարցմանը մասնակից ուսանողների 324-ը կամ 92,6 % -ը 18-ից 24 տարեկան էին, իսկ 26-ը՝ 24-ից 43, տես գրաֆիկ 2:




Պատահական ընտրությամբ սոցիոլոգիական հարցմանը մասնակից ուսանողները ներկայացնում են 9 համալսարանների տարբեր ֆակուլտետներ, կուրսեր և մասնագիտություններ: Նրանց բաժանվել է հարցաթերթիկներ, որոնցում ընդգրկված են եղել 9 բաց և փակ հարցեր:/ տես հավելված 1/

Ուսանողները պատասխանել են հետևյալ հարցերին:

Ձեր կարծիքով կա՞ արդյոք կոռուպցիա բուհերում

Հարցման մասնակից ուսանողներից 245-ը, կամ 70% -ը դրական է պատասխանել այս հարցին, միայն 105-ը՝ կամ 30% -ը ժխտական, տես՝ u գրաֆիկ 3, որը խորհելու և մտահոգությունների տեղիք է տալիս:



Ըստ որոշ հետազոտողների, ”ուսանողները հիմնականում որակում են որպես կոռուպցիոն վարք կաշառք տալը, կաշառք վերցնելը, պաշտոնական դիրքի չարաշահումը և շատ քչերն են կոռուպցիայի դրսևորում համարում կոռուպցիոն վարքի բոլոր տեսակները...հովանավորչությունը, բարեկամական/ընկերական

կապերի օգտագործումը, փոխադարձ միջնորդությունը և փոխադարձ “լավություն անելը” որպես կոռուպցիայի դրսևորում”:⁴

Հաջորդ հարցը, որը տրվել է ուսանողներին, հետևյալն է:


Եթե կան, ապա որո՞նք են կոռուպցիայի պատճառները բուհերում

Այս հարցին պատասխանելու համար ուսանողներին մի շարք տարբերակներ է առաջարկվել, կամ նրանց հնարավորություն է տրվել նշել իրենց ուրույն տարբերակը: Պատասխաններն եղել են հետևյալը:

Ուսանողների 30,9 % -ը պատասխանել է, որ կոռուպցիայի պատճառը ԲՈՒՀ-երում ուսանողների ծուլությունն է, 28,3 % -ը, դասախոսների ցածր աշխատավարձերը, 17,7 % -ը, թույլ վերահսկողությունը, 23,1% -ը կրթական օրենքների և համակարգի անկատարությունը, տե՛ս գրաֆիկ 4:

Գրաֆիկ 4

Որոնք են կոռուպցիայի պատճառները ԲՈՒՀ-ում



- ա) ուսանողների ծուլությունը 30.9%
- բ) դասախոսների ցածր աշխատավարձը 28.3%
- գ) թույլ վերահսկողություն 17.7%
- դ) կրթական օրենքների և համակարգի անկատարություն 23.1 %

Անկասկած կոռուպցիան ծնող պատճառներից են նաև ա / արմատացած կոռուպցիոն մշակույթը, որը ձևավորվել է ուսանողների և նրանց ծնողների շրջանում, ըստ որի կրթական համակարգում կարելի է ամեն ինչ գնել և հասնել բարձր գնահատականների եթե ոչ փողի. գոնե լավ նվերի, կամ կամ ծանոթ/ բարեկամի միջոցով բ/ անհանդուրժողականության մթնոլորտի բացակայությունը և հարմարվողականությունը կոռուպցիոն երևույթների նկատմամբ: Այսպես օրինակ, սոցիոլոգիական հարցման մասնակից ուսանողների առավազն 25% -ը գտնում է , որ «անհնար է ոչինչ անել կոռուպցիոն վերացնելու ուղղությամբ ԲՈՒՀ-երում, քանի որ այն միշտ եղել է և այդպես էլ կմնա»: Մեկ այլ ուսանող նշել է « կոռուպցիան ձեռնտու է չտվորող, ծուլ ուսանողներին: Գիտակ ուսանողը կարող է պայքարել կաշառակեր դասախոսի հետ իր գիտելիքով և ստիպել նրան նշանակել արժանի գնահատական, Եթե գումար են տալիս, ուրեմն վստահ չեն իրենց գիտելիքների վրա»:

⁴ Կարապետյան Սվետլանա, “Կոռուպցիոն մշակույթի ուսումնասիրությունը ԵՊՀ ուսանողների շրջանում” ԱՄՆ շրջանավարտների և գիտնականների համաժողով. “ Բարեխղճությունը գործողության մեջ. Կրթություն, սոցիալական պատասխանատվություն և զարգացում” սեղմագրեր և հոդվածներ, էջ. 83

Բազմաթիվ ուսանողներ և դասախոսներ, որպես կոռուպցիայի հիմնական պատճառ ԲՈՒՀ-րում նշում են դասախոսների ցածր աշխատավարձերը: Օրինակ ՀՀ Ճարտարագիտական համալսարանի դասախոսներից մեկը նշեց, որ հարկավոր է ստեղծել այնպիսի համակարգ, որտեղ դասախոսների աշխատավարձը կախված չլինի ուսանողների քանակից, իսկ դասախոսը իր ստացած աշխատավարձով կարողանա արժանապատիվ ապրել և չմտածել կողմնակի եկամտի աղբյուրների մասին»:

Դասախոսներից շատերը, ինչպես նաև սոցիոլոգիական հարցման մասնակից 350 ուսանողների 23,1 % -ը գտնում էին, որ կոռուպցիան ծնող պատճառներից է կրթական օրենքների և համակարգի անկատարությունը: Այստեղ նրանք մատնանշում են, արտոնությունները վերացնելու և պետպատվերի համակարգով ԲՈՒՀ-ընդունվելու կոռուպցիոն ռիսկերի մասին: Այդ մասին բարձրաձայնել է նաև ԱԺ պատգամավոր Ռուբիկ Հակոբյանը:

Այսպես օրինակ, ըստ «Ժամանակ» օրաթերթի « ամեն տարի պետպատվերով բուհեր են ընդունվում 1700 ուսանող, որոնցից արական սեռի են մոտ հազարը, և հենց այդքան թվով երիտասարդներ ստանում են տարեկետման իրավունք: Շատերը համարում են, որ վերացնելով ուսման պետպատվերով տարեկետում ստանալու արտոնությունը՝ կարելի է հասնել սոցիալական արդարության, քանի որ հարուստ խավի երեխաները հենց այս ճանապարհով են ազատվում զինվորական ծառայությունից:»⁵

Խնդիրը ոչ թե տարեկետման իրավունքն է, այլ այդ իրավունքի աճուրդային վաճառքը գրում է «Ժամանակ» օրաթերթը անդրադառնալով արտոնությունների վերացմանը և նշելով, որ « ըստ վիճակագրության `ասպիրատուրայում սովորողների 90 տոկոսը տղաներ են, սակայն ավարտելով ասպիրանտուրան՝ նրանցից միայն 5-6 տոկոսն է զբաղվում գիտությամբ, իսկ մյուսների դեպքում պարզվում է, որ արդեն կայացած գործարարներ են ... բուհ և ասպիրանտուրա ընդունվումնվու են մարդիկ ոչ թե սովորելու կամ գիտությամբ զբաղվելու, այլ բացառապես բանակից տարեկետում ստանալու համար»:⁶

Նշեք բուհերում կոռուպցիայի ռիսկայնության աստիճանը տոկոսներով

Նպատակ ունենալով պարզել ԲՈՒՀ-ական կրթության որ բնագավառում են գերակշռում կոռուպցիոն ռիսկերը սոցիոլոգիական հարցման ընթացքում ուսանողներին առաջարկվել է գնահատել կոռուպցիայի ռիսկայնության աստիճանը տոկոսներով 100 բալանոց սանդղակով: Ըստ ռիսկայնության աստիճանի ուսանողները գնահատել են ԲՈՒՀ-երի կոռումպցավածությունը հետևյալ կերպ:

ա/ ընդունելության քննություններ 65 % - կոռուպցիոն ռիսկեր

բ/ ընթացիկ քննություններ 15% - կոռուպցիոն ռիսկեր

գ/ պետական քննությունները /35 %/- կոռուպցիոն ռիսկեր

Մոց. հարցմանը մասնակից ուսանողներից մեկը նշել է «եթե ընդունելության արդյունքում միայն բարձր գիտելիքներով դիմորդներ ընդունվեն կամ ըստ


⁵ «Ժամանակ» օրաթերթ, 7 մայիսի, 2016թ, էջ 3

⁶ Նուն տեղում

արժանվունյն գնահատվեն, ապա կոռուպցիոն ռիսկերը կնվազեն կամ իսպառ կվերանան»:

Ութ բուհում են առկա կոռուպցիոն ռիսկերը՝ պետական, թե՛ մասնավոր

Այս հարցին հարցման մասնակից 175 ուսանողներ կամ 50 % -ը պատասխանել է պետական ԲՈՒՀ-երում, 110-ը՝ կամ 31,4% -ը՝ մասնավոր ԲՈՒՀ-րում, իսկ 65-ը՝ կամ 18,6% -ը, երկուսում էլ: Տե՛ս գրաֆիկ 5:



Արդյո՞ք ուսանողական խորհուրդները արդյունավետ են պայքարում կոռուպցիայի դեմ

Այս հարցի կարևորությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր ԲՈՒՀ-ում հենց ուսանողները առաջին հերթին պետք է լինեն կոռուպցիայի դեմ պայքարող առաջամարտիկների շարքում: Իհարկե, այդ պայքարում անգնահատելի դեր կարող են խաղալ ուսանողական խորհուրդները, որոնք սակայն կրթական կամ մշակութային միջոցառումներից զատ՝ գրեթե բոլորովին աչքաթող են արել կոռուպցիայի պրոբլեմը, ինչպես նաև պայքարը հանուն ակադեմիական ազնվության և գրագողության դեմ: Ինչպես ցույց տվեցին սոցիոլոգիական հարցման արդյունքները, հարցման մասնակից 177 ուսանողներ կամ ուսանողների 50,6 % -ը, գտնում են, այդ պայքարը արդյունավետ չէ, իսկ ուսանողների 49,4% -ը, որոնք կարծում այն որ այնուամենայնիվ արդյունավետ է, չեն բերել գեթ մեկ օրինակ, որտեղ ուսանողական խորհուրդը մասնակցեր, կոռուպցիոն երևույթի, կանխարգելման/բացահայտմանը, կամ առաջարկություններ ներկայացնել բարեվարքության ամրապնդման ուղղությամբ: Տե՛ս գրաֆիկ 6




Եվրոխորհրդի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար»-ի 2015-2017 թթ

ծրագիրը նպատակ է հետապնդում է բարձրագույն ուսումնական հաստատություններում բարվարության ամրապնդմանը և կոռուպցիայի դեմ պայքարը: Այդ ծրագիրը վեր է հանում նաև ԲՈՒՀ-երում դասախոսների և ուսանողների էթիկայի օրինակելի կանոնագիրք մշակելու խնդիրը: Նախատեսվում է , որ ԲՈՒՀ-երում պետք է ստեղծվեն էթիկայի հանձնաժողովներ: Մեր կողմից ուսումնասիրված վերոհիշյալ ԲՈՒՀ-րից շատերում, արդեն ձեռնամուխ են եղել էթիկայի կանոնագիրք և հանձնաժողով ստեղծելու գործընթացին: Այսպես օրինակ ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիայի Վարքագծի Կանոնագիրքը ստեղծվել է 2015 թ.-ին և ուժի մեջ է մտել 2016թ հունվարի 1-ից: Վարքագծի սույն Կանոնագիրքը ընդգրկում է այնպիսի կարևոր դրույթներ, ինչպիսիք են, Ակադեմիայի աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, էթիկայի հանձնաժողովի կազմակերպման և գործունեության կարգը և այլն: Հատուկ կերպով ուզում ենք ընդգծել Ակադեմիայի աշխատողների աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ Կանոնագրքում սահմանված դրույթները, որըտեղ հստակորեն նշվում է " չչարաշահել պաշտոնական դիրքը, իր կամ այլ անձանց համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր պայմաններ ստեղծելու համար":⁷

Մեկ այլ, Մովսես Խորենացու անվան համալսարանի Վարքագծի Կանոնագրքում նշված է. «կաշառք վերցնելը կամ կաշառք տալը անհամատեղելի են դասավանդող աշխատողի մասնագիտական բարոյականության հետ»:⁸

Ցավոք շատ ԲՈՒՀ-երում էթիկայի Կանոնագիրքը ստեղծված չէ կամ ձևավորման փուլում է: Այդ են վկայում նաև ԲՈՒՀ-երի 350 ուսանողների շրջանում անցակցրած սոցիոլոգիական հարցման արդյունքները: Այսպես, այն հարցին թե **գործո՞ւմ է արդյոք էթիկայի խորհուրդ կամ հանձնաժողով Ձեր համալսարանում**, նրանք պատասխանել են հետևյալ կերպ:

Ուսանողների, 14,3 % -ը պատասխանել է ոչ, իսկ 61,7% -ը ընդգծել է թե ընդհանրապես չգիտի և չի լսել դրանց մասին: Տես գրաֆիկ 7:



3.0 Բարելավարության դասավանդման արդյունավետությունը ՀՀ ԲՈՒՀ-երում

⁷ Հայաստանի Հանրապետության Պետական Կառավարման Ակադեմիա, Վարքագծի Կանոնագիրք, Երևան, 2015թ , էջ. 17
⁸ Մովսես Խորենացու անվան համալսարան, Վարքագծի Կանոնագիրք, Երևան, 2016 թ, էջ 8

Ակնհայտ է, որ ԲՈՒՀ-երում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը ուղղակիորեն կախված է մի շարք կարևոր հանգամանքներից, որոնցից են.

ա/ ի±նչքանով է արդյունավետ են իրականացվում հակակոռուպցիոն ուղղվածությունն ունեցող դասընթացների, մոդուլների կամ առաձին վերցված թեմաների դասավանդումը տվյալ վերցված ԲՈՒՀ-ում,

բ/ ի±նչ տևողությամբ են դասավանդվում տվյալ դասընթացները, մոդուլները, թեմաները,

գ/ ա±րդյոք ԲՈՒՀ-ի դասախոսները անցել են վերապատրաստման դասընթացներ բարեվարքության թեմաներ դասավանդելու ուղղությամբ,


դ/ ա±րդյոք ուսանողները ունեն պրակտիկ հմտությունները կյանքում կիրառելու բարեվարքության գծով ԲՈՒՀ-ում ստացած իրենց գիտելիքները:

Այս հարցերը պարզելու համար ուսանողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման ժամանակ ուսանողների տրվել է հետևյալ հարցը:

Արդյունավե±տ է արդյոք հակակոռուպցիոն կրթությունը ձեր ԲՈՒՀ-ում

Այս հարցին ստացվել են հետևյալ պատասխանները: Ուսանողների 45,7% -ը պատասխանել է այո, 40% -ը-ոչ, իսկ 14,3% -ը, չի կողմնորոշվել՝ պատասխանելով չգիտեմ:

Արդյունավե±տ է հակակոռուպցիոն կրթությունը



այո 45.7%
չգիտեմ 40%
ոչ 14.3%

Ներկայացված ծրագրով մշտադիտարկման է ենթարկել վերը նշված համալսարաններում դասավանդվող բարեվարքություն և հակակոռուպցիոն **դասընթացներ/ մոդուլները** և գնահատել վեց չափորոշիչների միջոցով:

Չափորոշիչները ուսումնասիրել են դասավանդման վեց հիմնական մանկավարժական մեթոդների արդյունավետությունը: Մասնավորապես մոնիտորինգի պարզվել է, թե արդյոք դասավանդվող հակակոռուպցիոն մոդուլը, դասընթացը հանդիսանում է միայն

1) /տեսական/հայեցակարգային, թե դասախոսը օգտագործում է նաև այլ մանկավարժական մոտեցումները, որոնցից կարևոր են.

2) էթիկական և բարոյական հարցերի քննարկումները, 3) ուսումնական իրավիճակների քննարկումները(իր բոլոր ձևաչափերում) case studies, 4) քննադատական դիտարկումներ, 5) խնդրի լուծման վրա կենտրոնացած ուսուցում 6) գործնական ուսուցում:

Վեց մանկավարժական մոտեցումների արդյունավետությունը դիտարկվել է երեք հարթակներում,

1/ տեսական, 2/ զգայական 3/ գործնական:

Այս վեց մանկավարժական մոտեցումները անչափ կարևոր են բարեվարքության/ հակակոռուպցիոն մոդուլների, դասընթացների արդյունավետ ուսուցման համար:

Մեր կարծիքով ԲՈՒՀ երում հակակոռուպցիոն կրթության արդյունավետությունը կարելի է չափել ոչ միայն տեսական գիտելիքներով այլ ուսանողների կողմից այդ գիտելիքների և հմտությունների գործնականում կիրառելու պատրաստակամությամբ, որը ենթադրում է ուսանողների կողմից կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության դրսևորում, էթիկայի և վարքագծի սահմանված կանոնների պահպանում:

Տվյալ մոդուլների/դասընթացների գնահատման/ մշտադիտարկման համար մշակվել է գնահատման աղյուսակ/ Տես հավելված 2/, որն օգտագործվել է ընդհանուր հաշվարկի ամփոփման համար: Ընդհանուր առմամբ վերը նշված 9 համալսարաններում պատահական ընտրությամբ մշտադիտարկման են ենթարկվել ոսումնասիրվել 11 դասընթաց, որտեղ դասավանդվել են բարեվարքության և հակակոռուպցիոն ուղղվածության թեմաներ: Ըստ ուսումնասիրությունների՝ պարզվել է, որ դասախոսները իրենց դասընթացներում ավելի շատ ուշադրություն են հատկացրել կոռուպցիայի և բարեվարքության տեսական հարցերին / 3,82 միջինացված գնահատական/, քան զգայական/ բարոյական և էթիկական թեմաներին / 2,45 / միջինացված գնահատական, և շոշափելիորեն ավելի քիչ/ 0,27 միջինացված գնահատական/ գործնական և կատարողական հարցերին և վերլուծություններին: Տե՛ս ստորև աղյուսակը:

ՀՀ Համալսարաններ	Առարկա, մոդուլ, թեմա և դասավանդման մոտեցումները	Մտածողություն/տեսական	Զգայական/ Բարոյական	Գործնական/ Կատարողական
9	11	3,82	2,45	0,27

Այս առումով, հատկանշանական է, որ դասախոսների կողմից դեռևս քիչ են օգտագործվում բարեվարքության և կոռուպցիային առնչվող ուսումնական օրինակներ, /case studies/, կյանքից վերցված բարեվարքության խնդրահարույց հարցերի քննարկումներ և այլն: Մեկ այլ խնդիր հանդիսանում է ուսանողների կողմից իրենց գիտելիքների գործնական կիրառումը, որը ստացել է ամենացածր միջինացված գնահատականը / 0,27/:

Ըստ «Հայկական Ժամանակ» թերթի «Հայաստանյան ԲՈՒՀ-երը ուսանողին չեն սովորեցնում սովորել, պարզապես ուսանողի գլխում կուտակում են փաստական գիտելիք: Գործնական պարապմունքները ոսումնական հաստատություններում նվազագույնի են հասցված»:⁹ Իսկ Կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի ղեկավար Ռուբեն Թոփչյանը վկայում է « Պրակտիկան բուհերում կամաց-կամաց պակասում է»:¹⁰

4.0 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

⁹ «Հայկական Ժամանակ» 17 սեպտեմբերի, 2014թ.

¹⁰ Նույն տեղում

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերն կանխարգելու և բարեվարքության ամրապնդման ուղղությամբ ներկայացվում են հետևյալ առաջարկությունները:

- Խստացնել վերահսկողությունը ԲՈՒՀ-րի ընդունելության, ընթացիկ և պետական քննությունների նկատմամբ:
- ՀՀ կրթական օրենքում կատարել այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք կվերացնեն արտոնությունները ԲՈՒՀ –րի բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա ընդունվելիս՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:
- ՀՀ ԲՈՒՀ-երում ամրապնդել ադմինիստրատիվ կանխարգելիչ միջոցառումները, որոնք կնպաստեն կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Դրանց թվում.

ա/ բացել հեռախոսային “թեժ գիծ” ուսանողների, ծնողների և դասախոսների համար, որը կարող է գործել էթիկայի խորհրդին կից:

բ/ կոռուպցիոն և ոչ բարեվարք ամեն կարգի երևույթների հանդեպ ԲՈՒՀ –րում ստեղծել անհանդուրժողականության մթնոլորտ:

գ/ Բարեվարքության գծով պարբերաբար կազմակերպել դասախոսների և ուսանողների վերապատրաստման դասընթացներ:

- Որպես պարտադիր առարկա ԲՈՒՀ-րում դասավանդել բարեվարքության և հակակոռուպցիոն ուղղվածության դասընթաց: Այն ԲՈՒՀ-րում, որտեղ չկան այդպիսի հնարավորություններ , մշակել և այլ առարկաների դասընթացների մեջ ընդգրկել բարեվարքության և հակակոռուպցիոն ուղղվածության թեմաներ:
- Բոլոր ԲՈՒՀ-երում ստեղծել էթիկայի խորհուրդներ և հանձնաժողովներ:
- Որպես պարտադիր դասընթաց մտցնել ակադեմիական ազնվություն առարկան
- ԲՈՒՀ-երում հնարավորություններ գտնել դասախոսների աշխատավարձերը բարձրացնելու համար:
- Ակտիվացնել **Ուսանողական Խորհուրդների** ներգրավվածությունը կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեջ:
- Բարձրացնել իրազեկության և թափանցիկության մակարդակը յուրաքանչյուր կոռուպցիոն դրսևորման կանխարգելման համար ավելի շատ կիրառելով էլեկտրոնային գնահատման համակարգը:
- Ավելի շատ ուշադրություն հատկացնել ուսանողների հմտությունների զարգացմանը, դասընթացներում զարգացնելով կիրառական/գործնական հմտություններ:

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում առկա են կոռուպցիոն ռիսկեր, երևույթներ, որոնք հաղթահարելու համար անհրաժեշտ է քաղաքական կամք և կոնկրետ միջոցառումներ, ինչպես նաև օրենսդրական փոփոխություններ իրականացնելու: ՀՀ կրթական ոլորտը սերտորեն կապված է հասարակական կյանքի բոլոր բնագավառների, ինչպես նաև հակակոռուպցիոն ընդհանուր բարեփոխումների արդյունավետ իրականացման հետ:

Այնուամենայնիվ հետևյալ միջոցառումների իրականացումը հրատապ է ներկա հակակոռուպցիոն ռազմավարության հաջող իրականացման իրականացման համար:

1. Արտոնությունների վերացում / ԲՈՒՀ-երի, ընդունելության, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ընդունելության ժամանակ /,

2. Թափանցիկության, վերահսկողության ուժեղացում բարձրագույն կրթության և ընդունելության և ուսանողների գիտելիքների գնահատման բոլոր գործառույթներում: Այդ հարցում ցանկալի կլինի **պարբերաբար բոլոր բուհերում ներքին աուդիտի անցկացումը**

3. ԲՈՒՀ-երում էթիկայի խորհուրդների, հանձնաժողովների ստեղծում և ակադեմիական ազնվության սկզբունքների պահպանում, բարեվարքության գործնական կիրառման հմտությունների զարգացում ուսանողների շրջանում:

4. Արդյունավետ դարձնել հակակոռուպցիոն կրթության դասավանդումը ԲՈՒՀ-երում, հասնել նրան որպեսզի բարեվարքության գծով ավելի շատ դասընթացներ, մոդուլներ, թեմաներ ներառնվեն ԲՈՒՀ-ական դասընթացներում: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել ուսանողների պարկտիկ հմտությունների զարգացմանը և նրանց ներգրավվածության հակակոռուպցիոն պայքարի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՈՒՅՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն Ռազմավարություն և դրա իրականացման միջոցառումների ծրագիր, Երևան, 2009, հավելված, էջ 30
2. Կարապետյան Սվետլանա, «Կոռուպցիոն մշակույթի ուսումնասիրությունը ԵՊՀ ուսանողների շրջանում» ԱՄՆ շրջանավարտների և գիտնականների Համաժողով, «Բարեխղճությունը գործողության մեջ. Կրթություն, սոցիալական պատասխանատվություն և զարգացում» սեղմագրեր և հոդվածներ, Երևան 2013 , էջ. 83
3. Ավետիսյան Մերի, «Մաղարիչ» կամ «նվեր» դասավանդողներին: Ի՞նչպես են դասավանդողները մեկնաբանում արհեստավարժ բարեվարքությունը Հայաստանում» Բարեխղճությունը գործողության մեջ. Կրթություն, սոցիալական պատասխանատվություն և զարգացում” սեղմագրեր և հոդվածներ, Երևան 2013 , էջ. 178
4. Հայաստանի Օրինավորության Ազգային Համակարգի Գնահատում, Երևան 2014, էջ. 102
5. Հայաստանի Հանրապետության Պետական Կառավարման Ակադեմիա, Վարքագծի Կանոնագիրք, Երևան, 2015թ , էջ. 17
6. Մովսես Խորենացու անվան համալսարան, Վարքագծի Կանոնագիրք, Երևան, 2016 թ, էջ 8
7. «Ժամանակ» օրաթերթ, 7 մայիսի, 2016 թ.
8. «Հայկական Ժամանակ» օրաթերթ, 17 սեպտեմբերի, 2014թ

Հարցաթերթիկ

1. Նշե՛ք ձեր տվյալները

Սեռը _____ տարիքը _____ մասնագիտությունը _____
արական/իգական 18-24, 24 -43, 43-63 և ավել

2. Ձեր կարծիքով կա՞րդյոք կոռուպցիա բուհերում

Այո _____ Ոչ _____

3. Եթե կան, ապա որո՞նք են կոռուպցիայի պատճառները բուհերում

ա/ ուսանողների ծուլությունը

բ/ դասախոսների ցածր աշխատավարձերը

գ/ թույլ վերահսկողությունը

դ/ կրթական օրենքների և համակարգի անկատարությունը

ե/ այլ /նշեք/

4. Նշեք բուհերում կոռուպցիայի ռիսկայնության աստիճանը տոկոսներով

ա/ ընդունելության քննություններ /1-100%

բ/ ընթացիկ քննություններ /1-100%

գ/ պետական քննություններ /1-100%

ե/ այլ _____

5. Ձեր կարծիքով ոչ-բուհում են առկա կոռուպցիոն ռիսկերը՝ պետկա՞ն, թե՞ մասնավոր

Պետական _____

Մասնավոր _____

6. Արդյո՞ք ուսանողական խորհուրդները արդյունավետ են պայքարում կոռուպցիայի դեմ

Այո _____

Ոչ _____

7. Գործո՞ւմ է արդյոք էթիկայի խորհուրդ կամ հանձնաժողով Ձեր համալսարանում

Այո _____

Ոչ _____

Չգիտեմ, չեմ լսել դրանց մասին _____

8. Արդյունավե՞տ է արդյոք հակակոռուպցիոն կրթությունը Ձեր բուհերում

Այո _____

Ոչ _____

Չգիտեմ _____

9. Ի՞նչ կարելի է անել կոռուպցիան բուհերից արմատախիլ անելու համար:

/Նշե՛ք Ձեր կարծիքը համառոտ , եթե պետք է, ավելացրե՛ք առանձին թերթով:

ԴԱՍԸՆԹԱՑ ՄՈԴՈՒԼԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՂՅՈՒՄԱԿ

Համալսարան	Ֆակուլտետ/բաժին	Անուն Ազգանուն	Պաշտոնը	Էլ. փոստը
Դասավանդման մոտեցումները	Մտածողություն	Զգայական	Գործնական/Կատարողական	
Ցուրաքանչյուր մոտեցման գնահատականը	0-ից 1	0-ից 2	0-ից 3	Ընդհանուր
տեսական/ հայեցակարգային				
Էթիկական/բարոյական, կոռուպցիայի հետևանքների վերլուծության վրա հիմնված				
ուսումնական իրավիճակների կիրառում/ իր բոլոր ձևաչափերում/				
քննադական դիտարկումներ				
խնդրի լուծման վրա կենտրոնացված ուսուցում				
Գործնական ուսուցում				
Ընդհանուր				